

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՕՐ ԺՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Բ Ե Թ Ղ Ե Հ Է Մ Ի Ս Ո Ւ Ր Բ Ա Յ Ր Է Ն

ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՅ ՈՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Մեր Տիրոջ Սուրբ Ծննդեան այս խորհրդաւոր գիշերուան մէջ՝ նորէն կը լեցուինք սիրոյ, յոյսի եւ ուժի յաւերժական ժաշ-
փով, որովհետեւ աստուածայայտնութեան խորհուրդը քեա-
ւոր վերելքով մը կը հանէ զմեզ երկրէն երկինք, հանդիսատեսս ք-
նելու մարմնով երեւցող Աստուծոյ զօրութեանը:

Ունայն արտայայտութիւն մը չէ, «այսօր երկիրս երկինք
եղեն» քաջայայտութիւնը, զոր սրբազան եղբւր կ'արժատնօժէ ա-
մէն տարի մեր Տիրոջ Ծննդեան առիթով: Մարդուն կեանքը շը-
նորհիւ այդ Յայտնութեան նոր նշանակութիւն կ'ստանար:

Ծնունդը սրտատուչ եւ գեղեցիկ դրուագ մը չէ միայն, մին
անոնցմէ՝ որոնք յանախ յուզիչ եւ մեծ յիշատակներով կը հարս-
տացնեն կեանքը, այլ սկիզբը նոր կարգի մը՝ մարդկային տատ-
մութեան մէջ: Աստուածայայտնութեան խորհուրդը քեաւոր վե-
րելքով կը հանէ զմեզ երկրէն երկինք, հանդիսատեսս ռեւոյտ
մարմնով երեւցող Աստուծոյ զօրութեանը: Մարդ կրնայ մնալ նոյն
կաւէ կանթեղը, հողագանգուած իրականութեամբ, քշուստու-
քեամբ եւ վշտով առ լի, բայց յոյսին բերկրանքովը յաւետ շո-
ղափայլ:

Յիսուսի Ծնունդը մարդուն եւ Աստուծոյ երջանիկ հան-
դիպման տօնն է, ոսկի օղակը երկնքի եւ երկրի: Մահուկը որ կու-
գար իրեն իբրեւ օրօրոց ընտրելու բովանդակ աշխարհը, մարմնա-
ցած սէրն էր, աշխարհը տաքցնող հոգին, որ կը քանար երկնքին
սիրտը եւ մարդուն արգանդը, սփանչելի եւ նոր խորհուրդով մը:

Աշխարհը պէտք ունէր այս գիշեր մարմին առնող այդ
Սուրբ Հոգիին, որ կրակի պիտի վերածէր մեր կաւը, պղտոր եւ
գունատ մեր խորհուրդներուն պարգեւելու ստեղծումի սուրբ հը-
րաշէր: Հոգին որ չի գար մեզի այս աշխարհի ուժերէն, որ յաւեր-
ժական ժաշքֆն ու բխումն է լոյսի եւ սիրոյ, որ մեզի կը բերէ հա-
ւաստիքը թէ մարդուն տրուած է այլեւս իր կեանքը այլակերպե-
լու, պայծառակերպելու Աստուածայինին մէջ, եւ զայն տանելու
յաւերժին:

Գիտեմ թէ դուն կը հաւատաս, հաւատացած ես միշտ, ժողովուրդ Հայոց, արդարութեան, սիրոյ, խաղաղութեան եւ անոնց փրկարար եւ անկորնչելի փառքին: Քու պատմութիւնը արնագեղ եւ հսկայամարտ ճակատամարտն է այդ խոյանքին: Դարեր շարունակ արիւն և երազ իբրեւ սրտայոյզ պատգամներ շողացին վառ ի վառ քու գաւակներուդ ողբերգութեանց վրայ, բայց դուն կրքաւոր պահել քու հաւատքդ, որովհետեւ գիտցար հաւատալ Բեթղէհէմի խորհուրդին եւ ամէն տարի մանկացեալ Աստուծոյ հետ կրքաւոր մայրացնել քու հոգիդ:

Ի՞նչ փոյթ գառանցանք մարդերու, շառաշիւնը կործանումներու, պաշտամունքը ուժին եւ մամոնային: Մենք կը հաւատանք որ իր տիեզերական սէրը, ցանուած մարդոց հոգիներուն մէջ, կ'անի եւ կը մեծնայ ամէն օր, ըլլալու հսկայ ծառը եղբայրութեան, իր հովանիին ներքեւ առնելու ամբողջ մարդկութիւնը. համաձայն իր պատգամին:

Խաղաղութեան իդներու եւ ռազմաշունչ կիրքի խառնուրդ մըն է կեանքը, եւ ատոր համար թերեւս գեղեցիկ: Բարիին ու չարին հակամարտութեան հանդէսն է անիկա, ուր արդարութիւնը իր ուժը կը փորձէ ամէն փայլափոխի, հակառակ իր առջեւ ցցուող արգելքներուն:

Այս ըմբռնումին առջեւն է որ կ'աղուորնայ կռիւին գաղափարը, առանց աղարտելու խաղաղութեան սրբութիւնը: Ուսկայն ատոր համար կարեւոր է որ մարդիկ կարենան հոգեկան ոյրորտի մը մէջ փոխադրել զայն, բարոյական պայքարի մը վերածելով պատերազմի կիրքը:

Առաքեալին բացատրութեամբ «բարոյ պատերազմի» ծրարագիրն է որ պէտք է իրագործուի հոն ամէն վայրկեան: Յամբ բայց ամուր գնացով մարդկութիւնը դէպի անարիւն պատերազմ. այսինքն կենդանի խաղաղութեան կ'երթայ, ցից ու դերբուկ հաւաքանքով:

Ժողովուրդ Հայոց որ ի սփիւռս աշխարհի. նուիրական այս գիշերով, կեցած նորէն Սուրբ Ծննդեան վեհավայրին մէջ, քեզի կը փոխանցեմ աւետիսը, որուն հաւատքը քսան դարերէ ի վեր կը լեցնէ եւ կը զօրացնէ մեր քրիստոնէական կեանքը: Աւետիսը, զոր օր մը հովիւներ և հրեշտակներ տուին աշխարհին, տակաւին կ'արծազանգէ կարծես այս սրբազան այրին խորը: Զայն քեզի կը փոխանցեմ նոյնութեամբ՝ իբրեւ Տիրոջ արիւնով թաքստուած նշխարը: Առ եւ պահէ իբրեւ սպեղանի փղերութեան եւ սլաւապաշտութեան բովանդակ կեանքիդ համար: Շարունակէ հաւատալ յաւերժին, Յիսուսի Ծննդեան եւ մարդուն աստուածացումին, եւ մայրացուր հոգիդ այս գիշերուան մեծ խորհուրդովը, նը-

ման ֆու պապերուդ՝ որոնք դարեր շարունակ կաւեն ու հողէն վարդեր հանեցին, գեղումի բերելով գիշերները, բանալով դուռները երկնքին՝ իջեցնելու Աստուծոյ Որդին իրենց սիրտերուն մէջ եւ Մսուրի գաղջ ընտանութեան:

Անկա օր մը ծնաւ պատմութեան մէջ, բայց կրնայ ամէն օր ծնիլ մեր սիրտերուն մէջ, իբրեւ խորհուրդ մեծ եւ սփանչելի, մեր սիրտերէն անգամ մը եւս խլելով փաղցր աղաղակը, Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, մեզ եւ ձեզ մեծ աւետիփ: